

երկու հատվածի (այսինքն՝ կալվածատիրական ու պետական—Ա. Հ.) պայքարի պատմության գոհացուցիչ պատկերը (247):

Հեղինակն այնուհետև անդրադառնում է Հայ հասարակական-քաղաքական հոսանքներին և ցույց է տալիս, որ նրանք հողային հարցի լուծմանը մատնեում են ըստ էության երկու տեսակներին՝ լիբերալիզմի և հեղափոխական գեմակրատիզմի: Թրանցից առաջինը կարող էր հանգեցնել կապիտալիզմի զարգացման պրոսական, իսկ մյուսը՝ ամերիկական ուղիներին: Ապահովում է, որ անկախ այդ մտածողների ցանկություններից, հանդամանքներն այնպես դասավորվեցին, որ Հայաստանում, ինչպես և Ռուսաստանի մեծ մասում կապիտալիզմի զարգացումը զնաց պրոսական ուղիով:

Անկազմության մեջ գիտական լուրջ արժեք է ներկայացնում նաև այն բաժինը, որտեղ ամփոփվում են սովետական պատմաբանների ու տրեստնագետների կարծիքները Հայաստանում գյուղացիական ռեֆորմի և կապիտալիզմի զարգացման մասին: Հեղինակը անհաշտ է համարում պրոֆ. Հ. Ե. Քումանյանի այն ձևակերպումը, որից ստացվում է, թե Անդրկովկասի ռեֆորմը հանդիսանում էր արևելյի շուկաներում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության արդասիր, Համաձայն չէ պրոֆ. Մ. Հ. Աղոնցի այն կարծիքին, որ իբրև Ռուսաստանի ծայրամասերում, հատկապես Ահաստանում ծավալված գյուղացիական շարժումները ստիպեցին ցարիզմին ռեֆորմ անցկացնել նաև Անդրկովկասում: Մերժում է Մ. Սալյանի, Խ. Ավդալբեկյանի և Մ. Եղանյանի այն պնդումը, թե 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը չի կարելի ռեֆորմ համարել: Համաձայն չէ Խ. Ավդալբեկյանի այն հայտարարության հետ, որ իբրև Հայաստանում, մասնավորապես XIX դարի 40-ական թթ., գոյություն չեն ունեցել հորտության տարրեր և այլն:

Այս առարկումները պետք է հիմնականում հիշտ համարել, քանի որ ռեֆորմի պատճառը Անդրկովկասում ոչ թե ցարիզմի արևելքում վարած քաղաքականությունն էր կամ կայսրության

այլ ծայրամասերում ու Ահաստանում ծավալված գյուղացիական շարժումները: Այլ ցարիզմի վերջրած բեղհանուր բուրժուական վերափոխումների կուրսը: Անդրկովկասի տնտեսական վերելքն ու գյուղացիական պայքարի ուժը: Որքան էլ որ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը պահպաներ ֆեոդալական հողատիրությունը, շինականների շահագործման միջնազարյան ձևերը և արտատնտեսական հարկադրանքի տարբերակները, այնուամենայնիվ, դա ռեֆորմ էր, քանի որ իր մեջ պարունակում էր բուրժուական գծեր և փոքր ինչ պայմաններ էր ստեղծում կալվածատիրական գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար:

Պրոֆ. Վ. Հ. Ռշտունու աշխատությունը հանդիսանում է արժեքավոր ներդրում մեր պատմագիտական գրականության մեջ: Այն գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա և հատկանշվում է գիտական խոր վերլուծումներով ու կարևոր բեղհանրացումներով: Նրկար ու ձիգ տարիներ ուսումնասիրելով Արևելյան Հայաստանի XIX դարի կալվածատիրական գյուղի ագրարային հարաբերությունները, զեռ 1940-ական թթ. նա բնութագրել էր դրանց հիմնական էությունը: Հարադրելով «Ուրվագծերի» Ա և Ի մասերը, Հեղինակն առիթ ունեցավ ամփոփել ագրարային հարաբերություններով զբաղվող մասնագետների վերջին երկու տասնամյակների ձեռք բերած նվաճումները, գատել հիշտը ախարից, վերացնել նաև սեփական թերությունները և ավելի ամրապնդել իր գիտական տեսակետները: Այժմ կարելի է ասել, որ հեղինակի սույն մենագրությամբ համարյա սպառվում է Հայաստանի կալվածատիրական գյուղի XIX դարի հողային հարաբերությունների ուսումնասիրությունը: Մասնագետներն այնուհետև պետք է ֆունդամենտալ աշխատություններ ստեղծեն նաև Հայաստանի գյուղացիության ամենաստվաբ մասի՝ պետական գյուղացիների, ինչպես և ավելի փոքր զանգվածի՝ վանքապատկան շինականների պատմության վերաբերյալ:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Р. А. АБРАМЯН, Армянские источники XVIII в. об Индии, изд. АН Арм. ССР, Ереван, 1968, 295 стр., цена 1 р. 16 к.

Ի. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, XVIII դարի հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1968, 295 էջ, գինը 1ռ. 16 կ.:

Հայ գաղթառնների պատմության մեջ կարևոր դեր է կատարել Հնդկաստանը: Ուշ միջնադարում, նոր պատմության շեմին այդ

երկրում հիմնված հայկական գաղթավայրերը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում խոշոր հետք են թողել:

Նախասովետական շրջանում, արտասահմանյան տարրեր երկրներում ապրող ու տարբեր նախասիրություններ ունեցող հայ հեղինակները (Հ. Տեր-Հովնանյանց, Ղ. Ալիշան, Թ. արք. Գուշակյան, Մ. Սեթյան, Ա. Ալպոյաճյան և ուրիշներ) անդրադարձել են հնդկահայ գաղութների պատմության առանձին հարցերին։ Նրանցից հնդկահայերի պատմությամբ ամենից հանգամանորեն զբաղվել է Մեսրոպյան Սեթյանը։ Ապրելով Հնդկաստանում, նա շրջագայել է երբեմնի հայաշատ վայրերը, օգտվել պետական և անձնական արխիվներից ու բազմաթիվ նյութեր գիտական շրջանառության մեջ դնելով՝ գրել իր «Հայերը Հնդկաստանում» արժեքավոր աշխատությունը։ Այսուհանդերձ Մ. Սեթյանի ուսումնասիրությունը շատ հեռու է հնդկահայ գաղթօջախների ամբողջական պատմությունը ներկայացնելուց։ Բավական է նշել, որ նա գրեթե չի օգտագործել հայկական աղբյուրներ և, բացի այդ, տարվելով առանձին հայ անհատների գործունեության նկարագրությամբ և երբեմն էլ չափազանցությունների մեջ ընկնելով, կամա թե ակամա տեսադաշտից դուրս է թողել հայկական գաղթօջախները՝ իրենց ամբողջության մեջ վերցրած։

Ուստի, կարելի է ասել, որ մինչև այժմ չունենք հնդկահայերի պատմությունը համակողմանիորեն լուսաբանող քիչ թե շատ ծանրակշիռ որևէ ուսումնասիրություն։ Վերջին տասնամյակում հայ գաղթավայրերի պատմության գիտական ուսումնասիրությունը աշխուժացել է։ Հետազոտողները հայ գաղթականներին ընդունող, հյուրընկալող ժողովրդի լեզվով եղած և հայկական աղբյուրներում պահպանված նյութերի հիման վրա շարադրում են հայ զանգվածի պատմությունը, սակայն հաճախ անտեսում կամ անբավարար ուշադրություն են դարձնում հայկական աղբյուրները հրատարակելու, դրանք շրջանառության մեջ դնելու խնդրի վրա։ Մինչդեռ կասկածից վեր է, որ գրավոր հարուստ ժողովրդություն թողած գաղթավայրերի հայկական աղբյուրները, տվյալ գաղթօջախի հայ հատվածի պատմությունից զատ, մեծապես կարող են նպաստել նաև այդ երկրի պատմության լուսաբանմանը։ Եվ դրա պահանջը մշտապես զգացվում է։

Այս առումով խրախուսելի նախաձեռնություն են հանդես բերել ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորը և նրա աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Ա. Արրահամյանը, գիտական հասարակայնության, մասնավորապես սովետական արևելագիտության ուշադրությանը ներշնչալից «XVIII դարի հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին» գիրքը։ Մենագրությունը նվիրված է Թովմաս

Խոջամալյանի «Հնդկաստանի պատմությունը և Հակոբ Սիմոնյանի «Հայդար Ալի-խանի կենսագրությունը» աշխատությունների ուսումնասիրությանը և նրանց բնագրերի հրատարակմանը։ Երկու աղբյուրներն էլ գալիս են ճշգրտելու և հարստացնելու XVIII դարի երկրորդ կեսին եվրոպական գաղութարարների դեմ Հնդկաստանում ծավալված ազատագրական պայքարի մասին այլ աղբյուրներից մեզ հասած տվյալները։

Աշխատության առաջին փոքրածավալ բաժնում Ռ. Արրահամյանը տալիս է XVI--XVIII դարերի հայ համայնքների ու հայ-հնդկական հարաբերությունների պատմության համառոտ ուրվագիծը։ Հեղինակի վկայակոչած փաստերից երևում է, որ հայերը հաստատվել էին Հնդկաստանում եվրոպացիների մուտք գործելուց շատ առաջ։ Հայկական խոշոր համայնքներ էին ձևավորվել Մադրասում, Բոմբեյում, Կալկաթայում և բազմաթիվ այլ վայրերում։ Հնդկահայ օջախները առաջացել էին Պարսկահայաստանից, զլխավորապես Ջուղայից կատարված գաղթի հետևանքով։ Հայ համայնքների հիմնական շերտերը եղել են խոշոր ու մանր առևտրականները և արհեստավորները։ Օգտվելով տեղական իշխանությունների հովանավորությունից, հայ վաճառականները լայն կապեր էին ստեղծել և աշխույժ առևտուր էին անում Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի և Եվրոպայի ու Ասիայի բազմաթիվ այլ երկրների հետ։ Այսուհանդերձ հնդկահայ վաճառականների մեծ մասը զբաղված է եղել ներքին մանրածախ առևտրով։ Արհեստավորները, ինչպես և առևտրականները, չեն ունեցել իրենց համքարությունները, աշխատել են մեկուսացած և մեծ մասամբ կատարել են տեղի վաճառականների պատվերները ներքին և արտաքին շուկայի համար։ Հայտնի են, մասնավորապես, Ջուղայի ու Հնդկաստանի հայ արհեստավորների պատրաստած ոսկյա և արծաթյա նրբաճաշակ իրերը, որոնց առանձին նմուշներ թանգարանային արժեք են ստացել և պահվում են աշխարհի զանազան թանգարաններում։

XVIII դարի առաջին կեսում մուտք գործելով Հնդկաստան, եվրոպացիները սկսեցին օգտվել հայերի ունեցած կապերից և նրանց միջոցով հնդիկ իշխանություններից ստանալ ֆակտորիաներ հիմնելու և առևտուր անելու իրավունք։ Հայերը այդ շրջանում որոշակի դեր էին խաղում Հնդկաստանի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կյանքում։ Դա հակասում էր Հնդկաստան ներթափանցած եվրոպացիների և հատկապես անգլիացիների շահերին, բայց իսկի որ իրենք տակավին փոքրաքանակ ու թույլ էին, դիմում էին հայերին իրենց կողմը դրավելու և աստիճանաբար նրանց գործունեու-

թյանը վերահսկելու քաղաքականությունը։ Այդ նպատակով անգլիական Արևելա-հնդկական ընկերությունը 1688 թ. հունիսին հայերի հետ կնքում է մի պայմանագիր, որով վերջիններիս տրվում էր սեփական կրոնը դավանելու, ընկերության տերիտորիայում ու նրա նավերով ազատ առևտուր անելու արտոնություն։ այլ խոսքով, Անգլիայի քաղաքացիներին համահավասար իրավունքներ։

Հայերի համար նպաստավոր նման իրավիճակը, սակայն, երկար չի տևում։ Ամրապնդվելով Հնդկաստանում և տնտեսապես ու ռազմապես հզորանալով, անգլիացիները, սկսած XVIII դարի կեսից, առևտրի ասպարեզում հայերին սահմանափակելու քաջի անցնում են նրանց քացահայտ հետապնդելու քաղաքականության։ Հեղինակը հիշատակում է ոչ միայն Ա. Ալպոյաճյանին, այլև անգլիական պատմաբան Կ. Դատտին, որը նույնպես վկայում է անգլիացիների կողմից հայ վաճառականներից մեծաքանակ մաքսեր գանձելու, նրանց նավերն ու ապրանքները բռնագրավելու և նմանօրինակ այլ բազմապիսի ապօրինություններ անելու մասին։ Դրա հետևանքով կարճ ժամանակում Հնդկաստանի շատ քաղաքների, հատկապես Արևելա-հնդկական ընկերության տերիտորիայի այ համայնքները քայքայվում են։

Հայկական համայնքների հիւնական դանդաժը, հնդիկ աշխատավոր ժողովրդի հետ միևնույն քաղաքական և տնտեսական պայմաններում գտնվելով, եվրոպական գաղութարարների դեմ մղած պայքարում մշտապես եղել է հնդիկ ժողովրդի հետ։ Արդարև, համատեղ պայքարի օրինակները շատ-շատ են, սակայն նրանցից առավել ակնառուն հայերի մասնակցությունն է անգլիացիների դեմ 1760—1764 թթ. Բենգալիայում ծավալված պայքարին, որի մասին հանգամանորեն պատմում է Թ. Խոջամալյանը իր «Հնդկաստանի պատմություն» աշխատության մեջ։

Գրքի երկրորդ, նույնպես համառոտ բաժնում Մ. Աբրահամյանը բնութանոր ձևով բնութագրում է առհասարակ Հնդկաստանի և հայ-հնդկական հարաբերությունների մասին տեղեկություններ պարունակող հայկական աղբյուրները։ Այդ աղբյուրները նա իրավացիորեն բաժանում է երկու խմբի։ Առաջինը հայ պատմիչների և ժամանակագիրների մոտ հանդիպող առանձին վկայություններն են, որոնք արձանագրվել են Հնդկաստան այցելած իրենց հայրենակիցների պատմածներից և կամ քաղված են ավելի հին աղբյուրներից։ Նման կարգի վկայություններ կան մեր միջնադարյան պատմիչների մեծ մասի մոտ՝ սկսած Ազաթանգեղոսից ու սլատմահայր Մովսես Խրենացուց և վերջա-

րած Առաքել Դավրիժեցիով ու Խաչատուր Զուղայեցիով։ Երկրորդ խմբի հայկական աղբյուրներում Հնդկաստանն ու հնդիկները հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել։ Նրանցում հանդիպում են արժեքավոր ու արժանահավատ տեղեկություններ ինչպես երկրի տնտեսական, առևտրական ու մշակութային կյանքի, այնպես էլ հայ-հնդկական հարաբերությունների մասին։

Հայկական աղբյուրները արժեքավոր են հատկապես XVIII դարից սկսած, երբ Հնդկաստանի տարբեր անկյուններում հայկական համայնքներ են ձևավորվում։ Դրանցից, ըստ Ռ. Աբրահամյանի, լուրջ հետաքրքրություն է ներկայացնում Կոստանդ Ջուղայեցու «Դասագիրք առևտրական դպրոցի» աշխատությունը, որտեղ շատ ուշագրավ տեղեկություններ կան ուրիշ երկրների և Հնդկաստանի տարբեր շրջանների չափերի, կշիռների ու դրամական միավորների, ապրանքների գների վերաբերյալ։ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական ֆոնդում իր պրպտումների ընթացքում հեղինակը հայտնաբերել է այդ դասագրքի երկու ձեռագիր օրինակը (ձեռ. № № 5994, 8443)։

Պատմա-աշխարհագրական արժեքավոր տեղեկություններ են պարունակում № № 9100 (XVI դ.), 9071 (XVI դ.), 1721 (XVII դ.), 5026 (XVII—XVIII դդ.) ձեռագրերը։ XVII—XVIII դարերի Հնդկաստանի և հայ-հնդկական հարաբերությունների մասին շատ հետաքրքիր նյութեր կան Բրիտանական թանգարանում պահվող ձեռագրերում, որոնք գրվել են 1733—1740 թթ.՝ Կալկաթայում, Մադրասում, Նոր Դուդայում և այլ քաղաքներում։ Նաիր շահի հնդկական արշավանքին է նվիրված արշավանքի մասնակից Թամբուրջի Քյուլուկ Հարությունի «Թամազ Ղուլի խանի պատմություն» աշխատության մի մասը։ Փաստերին քաջատեղյակ հայ հեղինակի կողմից է դրվել «Հնդկաստանի թագավորների ժամանակագրությունը»։ Պակաս հետաքրքրություն չեն հարուցում Հովհաննես Տրապիզոնցու Ավետիս Կարբեցու, Հ. Տեր-Հովհանյանի և Հովհաննես Լադարևիչի ճամփորդական ուղեգրությունները։ Ուշագրավ վկայություններ են պարունակում արխիվային փաստաթղթերը և Հնդկաստանում գրված հայկական ձեռագրերի հիշատակարանները, էլ չենք խոսում այնտեղ հրատարակված հայ պարբերականների մասին։ Դժբախտաբար այդ աղբյուրների, մասնավորապես ձեռագրերի մի մասը ցրված է աշխարհով մեկ (Վենետիկ, Վիեննա, Անթիլիա, Կոստանդնուպոլիս, Լոնդոն, Փարիզ և այլուր), որպիսի հանգամանքը նկատելիորեն խոչընդոտում է նրանց պարունակած նյութերն ի մի բե-

բելու և ամբողջական ձևով ուսումնասիրելու գործը:

Ինչպես արդեն նշեցինք, աշխատությունը նվիրված է Հնդկաստանի պատմությանը վերաբերող երկու կարևոր բնագրերի հրատարակությանը: Հարկ է, սակայն, նշել, որ գրքի հեղինակը չի բավարարվել այդքանով, նա տվել է նաև այդ աղբյուրների ուսումնասիրությունը: Նախքան «Հնդկաստանի պատմություն» բովանդակության վերլուծությանն անցնելը, Ռ. Աբրահամյանը պարզաբանում է նրա հեղինակ Թ. Խոջամալյանի կյանքի ու գործունեության և աշխատության ձեռագրի հետ կապված հարցերը:

Թովմաս Խոջամալյանը ծնվել է Նոր Հուդայում XVIII դարի 20-ական թթ.: Մեսրոպ Թադիադյանի վկայությամբ նա եղել է ժամանակի նշանավոր ծովագնացներից ու վաճառականներից և սերտ կապեր է ունեցել Հնդկաստանի կառավարող վերնախավի հետ: Խոջամալյանը տիրապետել է գրաբար, անգլերեն, պարսերեն, բենգալերեն և մի քանի այլ լեզուների, հիանալի իմացել է Հայաստանի և Հնդկաստանի պատմությունը: Նրա հոնտորական տազանդի մասին է խոսում հետևյալ փաստը. Արևելահնդկական ընկերության անդամներից մեկի դեմ կոնդոնում անգլիական պառլամենտի առաջ հանդես գալով որպես հնդկահայ համայնքի ներկայացուցիչ, նա, շնորհիվ իր փայլուն ճառի, կարողանում է շահել դատը՝ հարկադրելով անգլիական իշխանին վերադարձնելու հայ համայնքից յուրացրած 500 հազար դահեկան գումարը: «Հնդկաստանի պատմությունը» նա գրել է 1768 թ., առատորեն օգտագործելով Շահ Ալամի թագավորական արխիվում պահվող փաստաթղթերը, ինչպես նաև տպագիր գրքերն ու նկարագրվող իրադարձությունների մասնակիցների բանավոր պատմածները: Թ. Խոջամալյանը մահացել է 1790 թ. և թաղվել Դելիում:

Հնդկահայ «Շտեմարան» ամսագրի խմբագիր Մ. Մկրտչյանը ժամանակին Խոջամալյանի աշխատությունը հրատարակելու վերաբերյալ հայտարարություն է տալիս, սակայն մեկնեալ գտնելով, նա միայն որոշ զրույթներ է տպագրում իր ամսագրում (1822 թ.): Ավելի ուշ Մ. Թադիադյանը նույնպես, այդ աշխատությունը առանձին գրքով հրատարակելու հույսը կորցնելով, «Ազդարար» ամսագրի 1849 թ. համարներում տպագրում է նրա երկրորդ մասի որոշ զրույթներ: Հետագայում տպագրվում է ամբողջ աշխատությունը, սակայն այդ հրատարակությունից այժմ մնացել են մի քանի հազվագյուտ օրինակներ: Երկար ժամանակ ձեռագիրը համարվում էր կորած, սակայն Ռ. Աբրահամյանին հաջողվել է պարզել, որ նրա լրիվ արտագրված

տեքստը պահվում է Սպահանի հայկական ձեռագրերի հավաքածուում:

Գրախոսվող աշխատության երկու առանձին բաժիններում վեր է հանվում Թ. Խոջամալյանի «Պատմության» նշանակությունը եվրոպացիների Հնդկաստան ներթափանցելու և բենգալիայում գաղութարարների դեմ ծավալված պայքարի դրվագները ճշմարտացի ներկայացնելու գործում: «Հնդկաստանի պատմության» հեղինակը նախ հատուկ կարևորություն է տվել 1756—1760 թթ. Սիրաջ-ուդ-Դոուլեի նավարկության շրջանի իրադարձություններին և նկարագրել է դրանք: Ռ. Աբրահամյանը իրավացիորեն նկատում է, որ Թ. Խոջամալյանը Սիրաջ-ուդ-Դոուլեին ու նրա զիսավորած շարժմանը համակիր չի եղել, որովհետև ինքը կապված էր Բենգալիայի բրիտանական վերնախավերի հետ, որոնց դեմ էլ հենց ուղղված էր ապստամբությունը: Բենգալիայի տեղական իշխանության և անգլիական Արևելահնդկական ընկերության միջև հակասությունները այնքան են սրվում, որ այն ընդունում է ռազմական ընդհարման բնույթ:

Սիրաջ-ուդ-Դոուլեի բանակը կարողանում է գրավել Կալկաթան և ազատագրել ողջ Բենգալիան: Նրա բանակում, անգլիական պատմաբան Դոդվելլի վկայությամբ, կոչվում էին նաև հայ աշխարհագրագիտները: Հաջորդ տարիներին ծավալված ընդհարումների շրջանում անգլիացիներին հաջողվում է կաշառելու միջոցով դավաճանության մղել նավարի զորավար Միր Ջաֆարին և 1757 թ. հաղթանակ տանելով Պլեսսայի ճակատամարտում, իրենց տիրապետությունը հաստատել ամբողջ Բենգալիայում:

Ռ. Աբրահամյանը, հենվելով հայկական աղբյուրի հաղորդած տվյալների և սովետական պատմաբաններ Ե. Յա. Լյուստերնիկի ու Կ. Ա. Անտոնովայի ուշագրավ հետազոտությունների վրա, քննադատում ու մերկացնում է անգլիական բուրժուական պատմագրության (Վ. Սմիտ, Տ. Մակուլեյ, Խոլուել) միտումը, որը անտեսելով ակնառու փաստերը, ջանում է սքողել հակաբրիտանական շարժման քաղաքական բնույթը, այն որակելով որպես օտարերկրացի հարուստ վաճառականներին կողոպտելու ավազակային մի շարժում:

Անգլիացիների դեմ Բենգալիայում ծավալված ազատագրական պայքարի երկրորդ կարևոր փուլը, որի մասին հայկական աղբյուրները փաստալի տեղեկություններ են պահպանել, 1760-ական թթ. առաջին կեսի շարժումն է: Հատկանշական է, որ այդ պայքարին շատ ակտիվ մասնակցություն են ունեցել տեղի հայերը:

Բենգալիայի Նոր-Նավար Միր Կասիմի մտերիմն ու խորհրդատուն էր նրա գործերի զիսավոր հրամանատարը՝ Նոր ջուղայեցի վաճա-

ռականի որդի Գրիգոր Հարությունյանը, կամ, ինչպես անվանում են նրան եվրոպացիները, Գորգին խանը: Նրա մասին, որպես հմուտ ռազմական գործչի, խոսում են ոչ միայն հայկական, այլև հնդկական ու անգլիական աղբյուրները: Նա Միր Կասիմի հետ կարճ ժամանակում կարողանում է եվրոպական առաջադեմ բանակների օրինակով կազմակերպել 40 հազարանոց լավ զինված բանակ: Բենգալիայի բանակում Գ. Հարությունյանից բացի առաջավոր հրամանատարական պաշտոններ էին վարում նաև Մարգար Քալանթարյանը, Հարություն Մարգարյանը, Գրիգոր Այվազյանը և շատ ուրիշներ: Հայ հրամանատարների թիվը բանակում հասնում էր հարյուրի: Գործում էր նաև զուտ ջուղայեցի հայերից կազմված առանձին գումարտակ:

Չնայած Բենգալիայի իշխանության ձեռնարկած միջոցառումներին, Արևելա-հնդկական ընկերությունն իր ձեռքն էր վերցրել առևտրի մենաշնորհն ու առանց մաքս վճարելու ազատ առևտուր էր անում և մեծ շահույթ ստանում: Միր Կասիմը հարկադրված է լինում ֆրանսիական, հոլանդական, պորտուգալական և այլազգի ուրիշ վաճառականների իրավունքները հավասարեցնել անգլիացիների իրավունքներին՝ բոլոր մաքսային տուրքերը վերացնելու եղանակով: Ծիշտ է, դրանից առևտուրը աշխուժանում է, սակայն դա մեծ հարված է հասցնում անգլիական առևտրական ընկերությանը:

Ինչպես և պետք էր սպասել, գործը հասնում է ռազմական ընդհարման: Ինդամալյանը բավական մանրամասն պատմում է հնդկական բանակի տարած հաղթանակների մասին, որոնք յրացնում կամ հաստատում են այլ աղբյուրներում պահպանված փաստերը: Շուտով ամբողջ Բենգալիան ազատագրվում է անգլիացիներից: Հայերի մասնակցությունը ազատագրական այդ պայքարին այնքան ակնառու է եղել, որ թշնամու դեմ տարած հաղթանակի օրերին, ի պատիվ հայերի, հնդկական դրոշակի հետ մեկտեղ բարձրացվել է նաև խաչազարդ հայկական դրոշմը:

Հետագա դեպքերի ընթացքում Գորգին խանը դավադրաբար վերավորվում է և 1763 թ. մահանում: Անգլիական պատմագրությունը ջանում է սպանությունը վերագրել Միր Կասիմին, սակայն Ռ. Աբրահամյանը հայկական աղբյուրների հիման վրա հավանական հետևություն է անում, որ սպանությունը կազմակերպել էին անգլիացիները Միր Կասիմի բանակը թուլացնելու և նրան հնազանդեցնելու նպատակով: Պատահական չէ, որ Գորգին խանի պատվավոր թաղումից հետո Միր Կասիմի հրամանով գնդակահարվում են անգլիական զորիները: Պատահական չէ նաև, որ Գորգին խանը հանդիսանում

է «Չենդրոշեկխոր» հնդկական պատմական վեպի գլխավոր հերոսը:

Մի քանի տարի անց լոնդոնում քննարկելով Արևելա-հնդկական ընկերության տերիտորիայում բնակվող հայերի հարցը, որոշվում է «անշնորհակալ» հայերին ղրկել 1688 թ. պայմանագրով նրանց վերապահված բոլոր իրավունքներից: Հիրավի, անգլիացիների՝ Հնդկաստանում հիմնադրվելու շրջանից տեղի հայերի վիճակը գնալով վատթարանում է:

Ծիշտ է, հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարը ճնշվում է, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է գրքի հեղինակը, անհետևանք չի անցնում: Նա իր բարերար ազդեցությունն է թողնում հնդկահայ այնպիսի առաջավոր մտածողների ու ազատագրական շարժման գործիչների գաղափարների ձևավորման վրա, որպիսիք են Հովսեփ էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը և ուրիշներ:

Հայկական երկրորդ աղբյուրը XVIII դարի երկրորդ կեսի Մայսորի և ամբողջ Հնդկաստանի քաղաքական ու ռազմական նշանավոր գործի: Հայդար Ալի խանի կենսագրությունն է, որի հեղինակն է Հակոբ Սիմոնյանը: Հայդար Ալիի մասին անցյալում շատ է գրվել: Մովսեսյան պատմագրության մեջ միայն Կ. Անտոնովան է, որ շարադրել է այդ շրջանի իրադարձությունները: Հակոբ Սիմոնյանի աշխատությունը կարեւոր է նրանով, որ հեղինակը ականատես է իր նկարագրած անցքերին՝ Հայդար Ալիի ամբողջ գործունեությանը (1764—1784 թթ.):

Հակոբ Սիմոնյանը ծնվել է վաճառականի ընտանիքում, եղել է բավական զարգացած անձնավորություն, մայրենի լեզվից բացի տիրապետել է անգլերենին, պարսկերենին, ֆրանսերենին և այլ լեզուների: Հայտնի է, որ նա Հայդար Ալիի հետ ունեցած իր մտերմական կապերը օգտագործել է հնդկահայերի վիճակը բարելավելու համար: Իր կյանքի վերջին տարիները նա անց է կացրել Մադրասում:

Սիմոնյանի աշխատությունը հրատարակվել է «Ազդարարի» 1794—95 թթ. համարներում, որոնցից այժմ աշխարհի տարբեր գրադարաններում պահվում է ընդամենը երեք օրինակ, իսկ ձեռագիրը կորել է:

Աշխատության առաջին մասում նկարագրվում է Հայդար Ալիի մանկությունը և ապա իշխանության հասնելու նրա պայքարը, ընդ որում հայկական աղբյուրների միջոցով ճշտվում են նրա գործունեության հետ կապված ուրիշ մանրամասներ:

Հանգամանորեն նկարագրվում են 1761—1764 թթ. Հայդարի նվաճողական կոիվները, մասնավորապես Բենգուր քաղաքի գրավումը: Հայդարը մի քանի վճռական հաղթանակ է տա-

նում անգլիացիների դեմ, փորձում հնդկական իշխանությունների միասնական ճակատ ստեղծել: Միաժամանակ Հայդարը զաշինքի մեջ է մտնում ֆրանսիացիների հետ. այդ նպատակով նա հատուկ պատգամավորություն է առաքում Փարիզ, որը մեծ հարգանքով է ընդունվում Լյուդվիկոս XVI-ի կողմից:

Հայդար Ալին կարողանում է ամբողջ Մասորը իր տիրապետության տակ գցել. անգամ իր անունով դրամ թողարկել: Խոսելով երկրորդ անգլո-մայսորական պատերազմի մասին, հայկական աղբյուրը հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Հայդարի բանակում անգլիական լրտես-գործակալների, իսկ վերջում՝ վճռական մի ճակատամարտի և մայսորական բանակի ջախջախման մասին: Ցավոք, հայերի և հայկական հարաբերությունների վերաբերյալ հայկական աղբյուրը գրեթե ոչինչ չի հիշատակում:

Ռ. Արրահամյանը աշխատության վերջում բերում է Թ. Խոջամալյանի «Հնդկաստանի պատմություն» (էջ 115—181) և Հ. Սիմոնյանի «Հայդար Ալի խանի կենսագրությունը» (էջ 195—258) ոչ ծավալուն բնագրերի ուսերեն թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով և տեքստաբանական ճշգրտումներով:

Տեքստերին կցված մեծաքանակ (426) ծանոթագրություններից պարզորոշ երևում է ոչ միայն հեղինակի բանասիրական հմտությունը,

այլ նաև նրա րաջատեղյակությունը Հնդկաստանի պատմությանը և անշլիական պատմադրությանը, առանց որի, հասկանալի է, անհնարին կլիներ նման աշխատության ստեղծումը: Շնորհիվ կատարված աշխատանքի, ուսմանական արևելագիտությունը հնարավորություն է ստանում օգտվելու երկու նոր արժեքավոր աղբյուրներից, որոնք լուսաբանում են XVIII դարի Հնդկաստանի պատմության կարևոր դրվագները: Խրախուսելի է այն, որ հեղինակը ամենևին չի անտեսում, այլ վկայակոչում և բարձր է գնահատում իրենից առաջ այդ թեմային անդրադարձած եվրոպական, հնդկ, ռուս և հայազգի ուսումնասիրողների ծառայությունները:

Արժեքավոր է հատկապես և այն հանգամանքը, որ Ռ. Արրահամյանը լայնորեն օգտագործել է Կ. Մարքսի՝ Հնդկաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները և, մասնավորապես, «Ժամանակագրական քաղվածքներ Հնդկաստանի պատմությունից» նշանավոր աշխատությունը: Ուղեցույց ունենալով Կ. Մարքսի ասույթները և վկայակոչելով հայկական աղբյուրները, նա քննադատում և մերկացնում է Հնդկաստանում Անգլիայի գաղութային քաղաքականությունն արդարացնող անգլիական բուրժուական պատմագրության միտումը, փաստերը խեղաթյուրված ներկայացնելու նրա փորձերը:

Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Документы на половецком языке, XVI в. (судебные акты Каменец-Подольской армянской общины). Изд. „Наука“, Москва, 1967, 430 стр., цена 1 р. 35 коп.

Վավերագրեր պոլովեցյան լեզվով, XVI դ. (Կամենեց-Պոդոլսկի հայկական համայնքի դատական արձանագրություններ), «Նաուկա» հրատարակչություն, Գոսկիվա, 1967, 430 էջ, գինը 1 ռ. 35 կոպ.:

Արևելքի մասենագիտության հուշարձանները շարքի 3-րդ հատորը նվիրված է Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական գաղութի դատարանի նիստերի հայատառ-դիվանդերեն արձանագրություններին: Հատորի մեջ գետնիցված են ուկրաինացի հայանի արևելագետ Տ. Ի. Գրուսինի վերձանած 298 արձանագրությունների բնագրերը (ոսուերեն տառադարձությամբ), նրանց ոսուերեն թարգմանությունը, ներածություն, բերականական բնագրձակ ծանոթագրություններ և բացատրություններ: Հատորում տեղ են գտել նաև խմբագիր է. Վ. Սևորոյանի՝ հայատառ-դիվանդերեն հուշարձանների հետա-

դատման պատմությանը նվիրված բնագրձակ ուսումնասիրությունը և Շա. Ռ. Գաշկինի «Հայկական գաղութը Կամենեց-Պոդոլսկում» ուշագրավ հոդվածը:

Տ. Ի. Գրուսինի երկար տարիների քրտնաշան աշխատանքի արգյունը հանդիսացող այս հատորը կարևոր ներդրում է հայատառ-դիվանդերեն հուշարձանների ուսումնասիրման բնագավառում, նրա հրատարակած արձանագրությունները հետաքրքրական շատ նյութեր են տալիս Արևելյան նվիրույայի հայկական ամենախոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական